

Ավելացրեք ջրախնայողությունն ու նվազեցրեք ջրօգտագործումը

Կալիֆորնիայում առասպելական երաշտ է: 2013 թիվը Կալիֆորնիայի գրանցված պատմության մեջ ամենաչորն էր: Ջրամբարներում ջրի մակարդակը ռեկորդային ցածր ցուցանիշի վրա է, իսկ Սիերրայում միայն աննշան ձյան պաշար կա. ուստի, նահանգապետ Ջերրի Բրաունը երաշտի նահանգային արտակարգ իրավիճակ է հայտարարել և խնդրում է բոլոր կալիֆորնիացիներին՝ 20 տոկոսով նվազեցնել իրենց ջրօգտագործումը:

Ի՞նչ է նշանակում՝ ջրօգտագործումը նվազեցնել 20 տոկոսով: Օգտակար խորհուրդների և տեղեկատվության համար կարդացեք ներսի էջերը: Անձնական օրինակով օգնեք խնայել մեկ անձին ընկնող օրական ծավալով 38 գալոն ջուր:

Fact

Փաստ. Հարավային կալիֆորնիացիներն օգտագործում են տարեկան 1.8 տրիլիոն գալոն ջուր: Եթե յուրաքանչյուր ընտանիք խնայի օրական գեթ 150 գալոն ջուր, ապա մենք կարող ենք շատ արագ վերականգնել մեր ջրային ռեսուրսների թեկուզ մի մասը:



«Զրո կաթիլ ջուր վատնելու քաղաքականություն»

Գլենդեյլի քաղաքային օրենսգրքի Գլուխ 13.36-ը (Chapter 13.36, Glendale Municipal Code) մի բաժին ունի, որը կոչվում է «Զրո կաթիլ ջուր վատնելու քաղաքականություն» (“No Water Waste Policy”): Այդ քաղաքականությունը մշտապես ուժի մեջ է, և դրա դրույթների խախտումը համարվում է քաղաքային օրենսգրքի խախտում: Խախտումներն իրավապահ հետևանքներ ունեն, և կարող են հանգեցնել $100-ից մինչև $500 տուգանքի, ջրի հոսքը սահմանափակող սարքի տեղադրման, կամ ջրի անջատման:

«Զրո կաթիլ ջուր վատնելու քաղաքականության» ներքո ջրօգտագործման սահմանափակումների ամփոփ նկարագրությունը.

1. Ասֆալտապատ տարածքը ջրմուղ խողովակով չլվանալ (նման տարածքն առաջարկում ենք մաքրել ավելով);
2. Հարկ եղածից ավել ջուր չցանել և բաց չթողնել;
3. Դեկորատիվ շատրվանները պետք է ունենան ջրի վերաշրջանառության համակարգ;
4. Ջրի արտահոսքը պետք է վերանորոգվի 72 ժամվա ընթացքում;
5. Ոռոգում. (ա) կանաչապատ տարածքները ժ. 9:00-18:00-ը չոռոգել; (բ) քամու կամ անձրևի դեպքում չոռոգել;
6. Կոմերցիոն, ինչպես նաև և ոչ-կոմերցիոն մասնավոր ավտոմեքենա ձեռքով լվանալիս օգտվել ձեռքի դույլից և արագ պարզաջրումներ անել՝ օգտագործելով անջատիչով կարգավորվող ջրի խողովակ;
7. Ավտոլվացման կոմերցիոն կետեր և լվացքատներ. (ա) ավտոլվացման կոմերցիոն հոսքային նորարաց կետերն ու կոմերցիոն լվացքատները պետք է օգտագործեն ջրի վերաշրջանառության համակարգ; (բ) մինչև 2014 թ. հուլիսի 1-ն ավտոլվացման բոլոր կոմերցիոն հոսքային կետերը պետք է տեղադրեն ջրի վերաշրջանառության համակարգ;
8. Շինարարական ջրի գերհոսք չպետք է թույլ տալ, և պետք է հնարավորինս օգտագործել վերամշակված ջուր
9. Կրակմարիչ այուներն օգտագործել միայն թույլտվության առկայության դեպքում, բացառությամբ հրշեջ ծառայության նպատակների;
10. Հասարակական սննդի կետեր. (ա) խմելու ջուրը մատուցվում է միայն հաճախորդի խնդրանքով; (բ) 2010 թ. հունվարից հետո անհրաժեշտ է տեղադրել և գործածել նախապարզաջրման խնայողական ջրցան փական;
11. Մենդի կետերն ու հյուրանոցային կետերը պետք է ջրախնայողության ծանուցումներ փակցնեն;
12. Կոմերցիոն հյուրանոցային հաստատությունները պետք է ծանուցումներ փակցնեն՝ հյուրերին հնարավորություն տալով չօգտվել լվացքատան ամենօրյա ծառայություններից;
13. Նոր շենքերում և ջրամատակարարման ծառայությունն ընդլայնող շենքերում արգելվում է եզակի ջրանցման սառեցման համակարգերի տեղադրումը;
14. Աշխատանքային և արդյունաբերական նպատակով օգտագործվող տեխնիկական ջուրը կենթարկվի առավելագույն հնարավոր վերամշակման:

GlendaleWaterAndPower

@COGWATERPOWER

www.GlendaleWaterAndPower.com

Տեղեկատվություն ջրի խնայողության մասին

Ջրի խնայողության և Կալիֆորնիայում ջրի պակասը հաղթահարելու մասին մեր ուղեցույցը

Օգնեք խնայել

Ջրի խնայողության մասին օգտակար խորհուրդների համար նայեք այստեղ

City of Glendale Water & Power

Your Trusted Community Utility

Խնայել ջուրը

ՏԱՆԸ Յուրաքանչյուր կաթիլը հաշիվ է

Ջուր խնայելը դյուրին է; նախ պետք է փոխենք մեր սովորությունները

ՑՆՑՈՒՂԻ ՏԱԿ ՄՆԱՑԵՔ 5 ՐՈՊԵ
Ընտանիքի բոլոր անդամներին սովորեցրեք անել նույնը
խնայում է օրը **5-10 գալոն,** մեկ անձին ընկնող ծավալով day

ԳՆԵՔ ՑԱԾՐ ԹՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՑՆՑՈՒՂԻ ԳԼԽԻԿ
Ծախսում է րոպեում 2-2 1/2 գալոն ջուր
խնայում է օրը **15 գալոն,** մեկ անձին ընկնող ծավալով

ԱՏԱՄՆԵՐԸ ՄԱՔՐԵԼԻՍ ԿԱՄ ՍԱՓՐՎԵԼԻՍ ՓԱԿԵՔ ԾՈՐԱԿԸ
խնայում է օրը **5-10 գալոն**

ՆՈՐՈԳԵՔ ԾՈՐԱԿԻՑ ԲՈԼՈՐ ԱՐՏԱՀՈՍՔԵՐԸ
խնայում է օրը **15-20 գալոն**

ՍՏՈՒԳԵՔ ԶՈՒԳԱՐԱՆԸ՝ ՋՐԻ ՈՐԵՎԷ ԱՐՏԱՀՈՍՔ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ
Սննդաներկի մի քանի կաթիլ լցրեք ջրի բաքը, սպասեք երեսուն րոպե
Եթե սննդաներկն անցնի զուգարանակոնք, ուրեմն ջրի արտահոսք կա
խնայում է օրը **30-500 գալոն**

ԼՎԱՑՔԻ ՄԵՔԵՆԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ՄԻԱՅՆ ԼԻԱՐԺԵՔ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՄԲ
Շաբաթական մեկ անգամ ավելի քիչ լվացք արեք
խնայում է մեկ լվացքից **30 գալոն**

ՍՊԱՍՔ ԼՎԱՑՈՂ ՄԵՔԵՆԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ՄԻԱՅՆ ԼԻԱՐԺԵՔ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՄԲ
Շաբաթական մեկ անգամ ավելի քիչ լվացեք սպասքը
խնայում է մեկ լվացքից **15 գալոն**

ՀԱՎԱՔԵՔ ԾՈՐԱԿԻ ՋՈՒՐԸ
Ցնցուղի կամ ծորակի ջրի տաքանալուն սպասելիս հոսող ջուրը հավաքեք դույլի կամ թասի մեջ: Օգտագործեք այդ ջուրը տնային բույսերը կամ պարտեզը ջրելու համար
խնայում է ամիսը **200-300 գալոն**

ԽՈՒՍԱՓԵՔ ԼՈԳԱՆՔՆԵՐԻՑ
Եթե այդպես անհրաժեշտ է, լցրեք Ձեր լոգարանը միայն կիսով չափ. ամբողջովին լի լոգարանը 36 գալոն ջուր է տանում
խնայում է մեկ անձին ընկնող ծավալով **18 գալոն**

ՓՈԽԵՔ ՍԱՆՏԵԽՆԻԿԱՆ
Եթե Ձեր տան սանտեխնիկան տեղադրվել է նախքան 1992-ը, ապա շատ հնարավոր է, որ այն փոխելով կարողանաք ջուր խնայել

Ջրախնայողությունը

ԴՐՍՈՒՄ Որքան քիչ, այնքան շատ

Ձեր տանն օգտագործված ջրի 60%-ը կանաչապատ տարածքի ոռոգման համար է

ՍՏՈՒԳԵՔ ՁԵՐ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
Վերանորոգեք ջրի արտահոսքերը, փոխեք ցնցուղների վնասված գլխիկներն ու կարգավորեք ցնցուղները՝ գերոռոգումից խուսափելու համար
խնայում է ամիսը **500 ԳԱԼՈՆ**

ՏԱՆ ԱՌՋԵՎԻ ԱՎՏՈՀԱՐԹԱԿԸ, ՊԱԹԻՈՆ, ԱՍՏԻՃԱՆՆԵՐՆ ՈՒ ԱՐԱՀԵՏՆԵՐԸ ՋՐԻ ԽՈՂՈՎԱԿՈՎ ՄԻ ԼՎԱՑԵՔ
Փոխարենն օգտագործեք ավել կամ օդամուղ սարք
խնայում է յուրաքանչյուր անգամ **150 ԳԱԼՈՆ**

ՄԵՔԵՆԱՆ ԼՎԱՆԱԼԻՍ ՀՈՍՈՂ ՋՐՈՎ ԽՈՂՈՎԱԿԸ ԲԱՑ ՄԻ ԹՈՂԵՔ
Օգտագործեք ավտոմատ անջատվող ծորակ, սպունգ և մի դույլ օճառաջուր
խնայում է օրը **10 ԳԱԼՈՆ**

ԾԱՌԵՐԻ ՈՒ ԹՓԵՐԻ ՇՈՒՐՋԸ ԾԱԾԿԵՔ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԻ ՇԵՐՏՈՎ
Պարարտանյութի 2-3 դյույմ հաստությամբ շերտը կօգնի պահպանել հողի խոնավությունն ու զովացնել արմատների համակարգը: Պարարտանյութի շերտեզրի և բույսի միջև թողեք վեց դյույմ տարածություն:
խնայում է ամիսը **750 ԳԱԼՈՆ**

ԽՈՏՀՈՒՆՁ ՄԵՔԵՆԱՅԻ ՇԵՂԲԵՐԸ ԲԱՐՁՐ ԴՐԵՔ
Շեղբի բարձրությունը դրեք 2 կամ 3 դյույմ: Բարձր հնձած խոտը կնվազեցնի խոնավության գոլորշիացումն ու ստվերի տակ կպահի արմատները
խնայում է ամիսը **500 ԳԱԼՈՆ**

ԿԱՆԳՆԵՔ ԽՈՏԻ ՎՐԱ ԵՎ ՏԵՍԵՔ՝ ԱՐԴՅՈ՞Ք ԱՅՆ ՈՒՂՂՎՈՒՄ Է ՈՏՔԸ ՎՐԱՅԻՑ ՎԵՐՑՆԵԼԻՍ
Եթե խոտի ցողուններն ուղղվում են, ապա այդ օրը ջրելու կարիք չկա
խնայում է ամիսը **750-150 ԳԱԼՈՆ**

ԾԱԾԿԵՔ ԼՈՂԱՎԱԶԱՆԸ
Սա կարող է նվազեցնել ջրի գոլորշիացումը
խնայում է օրը **30 ԳԱԼՈՆ**

ՏԵՂԱԴՐԵՔ ՈՌՈԳՄԱՆ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ
Ջրի փոքր ծավալ պահանջող ոռոգման համակարգերն ավելի քիչ ջուր են օգտագործում
խնայում է ամիսն ավելի քան **250 ԳԱԼՈՆ**

ՋՐԵՔ ՁԵՐ ԿԱՆԱՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔԸ ՇԱԲԱԹԸ ԵՐԵՔ ՕՐ
Յուրաքանչյուր ջրցանից ջրեք մոտ յոթ րոպե

ՋՐԵՔ ՆԱԽՔԱՆ ԺԱՄԸ 9:00-Ը, ԵՎ ԺԱՄԸ 18:00-ԻՑ ՀԵՏՈ*
Յուրաքանչյուր ջրցանից ջրեք մոտ յոթ րոպե

ԵԹԵ ԱՆՁՐԵՎ Է ԿԱՆԽԱՏԵՍՎՈՒՄ
Անջատեք ցնցուղներն անձրևից երկու օր առաջ, և անձրևից հետո ևս երկու օր դրանք անջատված պահեք

ՁՄՌԱՆԸ
Ձեր կանաչապատ տարածքը ջրեք միայն շաբաթը մեկ օր

Fact

Փաստ. Միջին կալիֆորնիացին օրական օգտագործում է 196 գալոն ջուր: Նվազեցրեք օգտագործումն օրական 20%-ով, կամ 38 գալոնով



ՁԵՐ ԿԱՆԱՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՁԵՎԵՐԻՑ ՄԵԿԸ ՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՏՈՒՆԿՆ Է ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԲՆԻԿ ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐՈՎ

- Կալիֆորնիայի ամենատարածված բնիկ բուսատեսակների ցանկը կարող եք գտնել մեր կայքում՝ www.GlendaleWaterAndPower.com, կամ այցելելով Ձեր տեղական տնկարան:
- Մասնակցեք կանաչապատման՝ մեր անվճար դասերին և սովորեք՝ ինչպես տնկել Կալիֆորնիայի բնիկ բուսատեսակները: Առաջիկա դասերի համար ստուգեք մեր կայքը, կամ զանգահարեք (818) 548-3874:

Ջրախնայողության մասին հավելյալ խորհուրդների համար այցելեք.
www.GlendaleWaterAndPower.com,
www.bewaterwise.com,
և www.saveourh2o.org